«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Բանավոր խոսքի, մենախոսության և երկխոսության զարգացումը անգլերենի դասերին

ԱՌԱՐԿԱ Անգլերեն

ՀԵՂԻՆԱԿ Տարոն Գրիգորյան

ՄԱՐԶ Արարատ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Լուսաշողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1 Բանավոր խոսք 4
Գլուխ 2 Մենախոսություն 11
Գլուխ 3 Երկխոսություն 12
Եզրակացություն 14
Գրականություն 15

Ներածություն

Այս աշխատանքի նպատակն է հետազոտել օտար լեզվի միջոցով հաղորդակցմոն կարողությունը միջնակարգ դպրոցներում։Ընդհանուր քննության ենթարկել այն միջոցներ, որոնք կարող են `

բարձրացնել օտար լեզվի (անգլերեն) ուսուցման արդյունավետությունը միջնակարգ դպրոցում.

որոնք կարևոր կառույց են համարվում սովորողների ուսուցումըն շարունակելու բուհերում։

Օտար լեզվի (անգլերեն) ուսուցման հիմնական նպատակը սովորողների լեզվահաղորդակցական կարողությունների զարգացումն է։ Բանավոր խոսքի ուսուցման ժամանակ խոսքի ընկալումը համարվում է ամենակարևոր մասերից մեկը, դրանով իսկ առանձնացվում են մի շարք խնդիրներ անգլերենի ուսուցման ժամանակ։ Առջարկվում են որոշ հաղթահարման ճանապարհներ, հատուկ վարժանքների, լսելու ունակությունը զարգացելու միջոցով։ Սովորողների համար անհրաժեշտ է ստեղծել միջավայր, որը կխթանի նրան օտար լեզվով մտածելու և հաղորդակցվելու անհրաժեշտություն։ Այս ամենի հետ մեկտեղ անգլերեն բանավոր խոսքի դասավանդման բարձր արդյունք ապահովելու համար շատ կարևոր է , որ սովորողները ունենան բառապպաշարային հնչյունական և քերականական գիտելիքներ, օգտագործելով ամենա ժամանակակից մեթոդները։

Գլուխ 1 Բանավոր խոսք

Դեռևս հնագույն ժամանակներից սկսված տարբեր երկրների միջև փոխհարաբերությունների գործընթացի առաջնահերտ հիմնախնդիրներից է համարվում հաղորդակցման կարողության ապահովումը օտար լեզվով, իսկ վերջինս անհնար է դառնում առանձ դրա իմացության: Անգլերենի ուսուցման արդի փուլում սկզբունքորեն տարբերվում է Հայաստանում ընդունված անգլերենի ուսուցման ավանդական, խորհրդային հայեցակարգից:

Անգլերենը, որպես ուսումնական պլանի անբաժան մաս, ծառայում է դպրոցական կրթության գլխավոր պետական նպատակի իրագործմանը, հատկապես, ազգային և համամրդկային արժեքներն իմացող ազատ անհատի դաստիարակմանը, որը կկարողանա իր լուման ներդնել քաղաքացիական հասարակութան ձևավորման ու զարգացման գործում: Միջնակարգ դպրոցում անգլերենի կրթական նպատալն է սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, որոնք կօգնեն նրանց կյանքում գտնել իրենց արժանի սեղը: ՄԻջնակարգ դպրոցում անգլերենի գիտելիքների ուսուցմամբ պայմանավորված է սովորողների լեզվամտածողությանզարգացման հրամայականով:

Անգլերենի ուսուցման գլխավոր նպատակը սովորողների մոտ սովորաղների մոտ հաղորդակցվելու մշակույթի ձևավորումն է՝ օտար լեզվի գործնական տիրապետոիմը: Ուսուցչի խնդիրն է՝

1. Յուրաքանչյուր սովորաղի համար ստեղծել օտար լեզվով շբվելու միջավայր.
    1. Օգտագործել այնպիսի մեթոդներ, որոնք յուրաքանչյուրին հնարավորություն կտան տարբերել մեծ ակտիվություն և ստողծագործական մոտեցում առաջադրված խնդիրների լուծման հարցում:

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, ինչպիսիք են, համագործաքցային ուսուցումը, նախագծային մեթոդը, նոր իսֆորմացիոն, տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը օգնում են իրականցնել դասավանդման նոր մոտեցումներ: Օտար լեզվի գիտելիքներ հարստացման նպատակով դպրոցում կարևորում է օտար լեզվի զարգացման ժամանակակից նպատակների ներկայացումը:

Օտար լեզվով հաղորդակցելու կարողությունները կարող են դռսևորոլ երկխոսություններում, երբ սովորողները կարողանում են՝

1. Տիրապետել առօրյա խոսակցական բառապաշարին.

2. Արտահայտել իրենց մտքերը. Զգացմունքները և այլն։

Խնդիրը չի սահմանափակվում կրթական երկխոսություններիկազմակերպման, այլ խոսքի գործընկերության հաստատմամբ։ Պետք է հաղորդակցության խնդիրների հիման վրա նյութի ընտրությունն ու կազմակերպումը այնպես անել, որհետաքրքրություն առաջացնի սովորողին։

Ժամանակակից տեղետվատվական տեխնոլոգիաները, ինտերակտիվ էլեկտրոնային գրատախտակը, դասպրոցեսի ընթացքում համացանցի մշտական հասանելիությունը, համակարգչային դասասենյակի առկայությունը, ուսուցչի ստեղծած էլեկտրոնային ուսումնական նյութերը, աշակերտի և ուսուցչի համակարգչակին ծրագրերի գործնական իմացությունը թույլ կտա ավելի արդյունավետորեն հասնել դպրոցում անգլերենի դասավանդման գլխավոր նպատակին։ Այս ամենի առկայության դեպքում հնարավորություն կտա սովորողներին և ուսուցիչներին ավելի շատ զբաղվել ստեղծագործական աշխատանքով։ Հայ ժողովրդի մշակույթը և հայ քաղաքականությունը անգլերենով ներկայացնելու կարողությունների զարգացումը սովորողների համար նախնական հիմքեր կստեղծի հետագյում մասնակից դառնա միջազգային կրթական, մշակութային և տնտեսության զարգացման ծրագրերին։ Միջնակարգ դպրոցում ուսումնասիրվող նյութերը պետք է այնպիսին լինեն, որ սովորողը կարողանա տիրապետել բնության, հասարակության, մշակութային կյանքին վերաբերվող բառապաշարին և ունենա համպատասխան կարողություններ և հմտություններ օտար լեզվով հաղորսակցվելու համար։

Թվային միջոցները որպես ուսումնական գործիք օգտագործելը կօգնի սովորողին ավելի տեսանելի արժևորել իր ստացած գիտելիքըև ձեռք կբերի կարողություններ իր առարկայական էլեկտրոնային փաթեթում, իսկ դասավանդողին՝ էլ ավելի լավ գնահատել սովորողի կատարած աշխատանքը։

Ստեղծված էլեկտրոնային ուսումնական նյութերը պետք է լինեն հավաստի հինավորումներով, հնարավին չափ սեփական ուժերով արված, լուսանկարներով, գրագետ և համապատասխան ազգային կրթության ծրագրերին և չափորոշիչներին։ Բանավոր խոսքը մարդու

մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից է։ Բանավոր խոսքի զարգացումը տեղի է ունենում մարդու ողջ կյանքի ընթացքում՝ իր վրա կկրելով անընդհատ զարգացման ձգտելու կարողությունը։ Հանրակրթական դպրոցում անգլերենով բանավոր խոսքի ընկալումը լեզվի իմացության հիմնարար բաղադրիչնեչից է, և դա ուսուցումը իրավմամբ կազմում է անգլերենի դասավանդման հենասյուներից մեկը։

Հաղթահարման տեսանկյունից դիտարկելիս ՝ խոասքի ընկալումը, լինելով այդ հարցում որոշիչ գործոն հաղորդակցության գործընթացքում, միաժամանակ լեզվական չորս հմտություններից (խոսել, լսել, գրել, կրդալ)ամենադժվարն է :

Այսօրվա բարձր տեխնոլոգիաների և համաշխարհային քաղաքականության դարաշրջանում անգլերեն սովորեցնող և ոչ մի դասընթաց կամ դասագիրք չի կազմվում առանց անգլերեն լեզվով խոսքի ընկալման հմտությունները զարգացնող աշխատանքների կամ նյութերի

Անգլերենով հնչող բանավոր խոսքը հասկանալը հմտություն է, և ինչպես ամեն մի հմտություն այն ենթակա է մշակման և զարգացման։

Լսելու հմտությունների զարգացման բուն գործընթացին անցնելուց առաջ անհնաժեշտ է սովորողի համար հարակեցնել մի շարքդրույթներ և նրա մոտ ձևավորել որոշակի տրամադրվածություն։ Սովորողը պետք է գիտակցի լսելու, բանավոր խոսքի ընկալման հույժ կարևորությունը, հասկանա, որ լսելը լեզվի իմացության հիմնարար հմտություններից է, առանց որի ո՛չ քերականական գիտելիքները, և ո՛չ բառապաշարը հնարավոր չէ փոխարինել կենդանի հաղորդակցության։

Սովորողին պետք է բացատրել, որ բանավոր խոսքի ընկալումը ոչ թե երկրորդական հմտություն է, այլ մի քանի հիմնարար հմտություն,որին տիրապետելը աշխատարար և ժամանակատար գործ է և պահանջում է նվիրվածություն և համբերություն։ Լսելու ունակության զարգացման հարցում կարևորում է առավելապես ուշադրության գործոնը։ Վարժանքների միջոցով ուշադիր լսելու կարճ ժամանակահտվածներն աստիճանաբաչ երկարացնելով, կարելի է հասնել ավելի գործուն կենտրոնացման։ Աստիճանական, քայլ առ քայլ

աշխատանքով հնարավոր է հնչող նյութի ընկալման հանդեպ սովորողի սկզբնական վախը, վրդովմունքը կամ հուսատությունը։Դրա համար աշխատանքները ծրագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել այն դրույթով, որունկնդրվող նյութի մակարդակը պետք է համապատասխանի

սովորողների հենքային գիտելիքներին: Մեկ այլ տեսանկյունից նյութը պետք է հետաքրքրի և համահունչ լինի սովորողների ներկայիս հետաքրքրություններին:

Այլ կարեւոր աղդեցություն կարող է թողնել մատուցվող նյութի ծավալը և որակը: Սովորողին պետք է նաև ծանոթացնել անգլերենի ընդունված արտասանությանը: Ըստ հստակ առաջադրված նպատակների, ցանկալի է կազմել ունկնդրվող նյութերի ցանկ:

Անգլերենով բանավոր խոսքը լսել -ընկալելու վերաբերյալ գոյություն ունեն ամենատարբեր աշխատանքներ և հանձնարարություններ, ինչպես օրինակ լսածի ընդհանուր գաղափար հասկանալն է, լսած նյութից մեկ առանձին տեղեկություն քաղելը և այլն : Սակայն դրանք ամենն էլ



ոչ թե սովորեցնում են խոսքը լսել ըմբռնել, այլ ստուգում են այդ գործընթացի արդյունավետությունը: Եթե բանավոր խոսքի ըմբռնումը ստուգողը հանձնարարությունները կատարելիս սովորողից պահանջվում է մեկ կամ երկու անգամ լսելով ճիշտ պատասխաններ տալ, ապա լսել սովորեցնելիս՝ նույն նյութը հարկ է լինում հնչեցնել բազմակի անգամներ: Կարովոր գործուն է տվյալ առջադրանքի համար տրամադրված ժամանակը և էական պայմանն է ժամանակի սեղմ սահմանափակում չունենալը:Հնարավորինս անհրաժեշտ է տրամադրել այնքան ժամանակ, որքան ժամանակ սովորողը միջին հաշվով, ունակ է կենտրոնացել իր ուշադրությունը: Դա կարող է լինել 20-30 րոպեյից մինչև մեկ դասաժամը՝ կախված նյութի բարդությունից և սովորողների պատրաստվածության մակարդակից: Ընտրված նյութը կարող է լինել 5-10 նախադասությունից սկսած մինչև 5-10 րոպե տևող խոսքը: Հարկ է սկսել ավելի պարզ ու հեշտ ընկալվող ուսումնական նյութից:

Սա սովորողին օգնում է իր մեջ արդնացնել հետաքրքրություն, որը ցանկալի է պահպանել ու զարգացնել մինչև վերջ:

Ուսուցանվող բուն նյութը լսելուց առաջ դասրանում պետք է ստեղծել հանգիստ, դրական լիցքերով հարուստ մթնոլորտ, խրախուսելով սովորողներին, որ նրանք դասպրոցեսի ընթացքում լինեն ազատ ու անկախ, չվախենան սխալվելուց և լարվելուց, բաց լինեն հնչյունային տեղեկատվության նկատմամբ և ուշադրությունը կենտրոնացնեն միայն հնչող խոսքի վրա.

Գործը հեշտացնելու համար կարելի է մի երկու խոսքով տեղեկացնել, թե նրանք ինչ նյութ են լսելու, նշել մի քան հուշող բառեր կամ արտահայտություններ, որ նրանց համար կարող են դառնալ հանգուցային: Այնուհետ սկսվում է բուն աշխատանքը: Աշխատողները մեկ կամ երգու անգամ նյութը լսում են սկզբից մինչև վերջ: Կրկին նյութը լսելուց հետո, ստուգվում է դրա ընկալման աստիչանը: Ուսուցիչը հարցերի միջոցով փորձում է հասկանալ թե սովորողները որքանով են ընկալել նյութը:

Դասարանը քննարկում է հնչած խոսքից ստացված տպավորությունը թեման նյութը կիռարված լեզուն, շեշտադրումները, խոսքը հասկանալու գործում, հուշող և խանգարող հանգամանքները: Ընթացքում կարելի է մի քանի հանգուցային մահեր հակիրճ գրանցել գրատախտակին՝ վերջում կրկին անդրադառնալու և նյութի հետ առաջին տպավորության համապտասխանելիությունը պարզելու համար:

Բերված անգլերենի 11-րդ դասարանի դասագրքի UNIT7 “The Big Apple” տեքստից է:Խթանման փուլում սովորողներին տրվում են հարցեր Նյու-Յորքի մասին՝

Have you ever heard of New York?

Why is it called “The Big Apple”?

What is New York famous for?

What kind of city is it? և այլն:

Այնուհետև գրատաղտակին գրվում են տեքստից բառեր, որոնք հնարավոր է դժվարուէյուն առաջացնեն սովորողների մոտ՝ լսած տեքստը լիարժեք ընկալելու հարցում:

Օրինակ՝

Liner

Bay

Wigwam

Skyscraper

Cheat

Capture

Illuminate

Wander

Graffity

Իմաստի ընկալման փուլում հարցեր են տրվում կոնկրետ լսած նյութի վերաբերյալ՝

Where is New York situated?

What is the statue of Liberty?

What does it symbolize?

Who was it presented by?

Name the famous streets in New York.

What can you say about The Empire State building? և այլն:

Կշռադատման փուլում կարելի է կազմել նախադասություններ՝ օգտագործելով դասի ակտիվ բառապաշարի միավորները, մի քանի նախադասությամբ ներկայացնել լսած նյութը, նշել, թե ինչ նոր բան սովորեցին տվյալ նյութից և կազմել երկխոսություն՝ ներկայացնելով դասընկերոջ հետ:

Դասարանային առաջադրանքներից բացի սովորողի լսելու հմտության զարգացման հզոր միջոց են տնային հանձնարարությունները: Այսօրվա հզոր տեխնիկական հնարավորությունների պայմաններում միանգամայն իրակն է սովորողներին լսել-ընկալելու տնային առաջադրանքներ տալը:

Տնային աշխատանքի առաջադրանքները կարող են լինեն թե ամբողջական, թե հատվածական ունկնդրման վերաբերյալ:Տնային առաջադրանքների առավելությունն այն է, որ սովորողը կարող է տվյալ աշխատանքի համար իրեն հարմար ժամանակ տրամադրել և բազմակի անգամներ լսել հանձնարարված նյութը: Մյուս կողմից նա տանն ինքնուրույն հետազոտություն կարող է կտարել՝ փորձելով բառարաններից բառիմաստների բացատրություն գտնել, համացանցից ծանոտանալ երևույթների պատմությանը,ելույթ ունեցող անձանց կենսագրություններին և այլն:

Տնային հանձնարարությունները անսահման ազատություն են տալիս ինքնուրույն ուսումնական գործընթացի իրականացման համար,որի արդյունքները թե հուզական, թե կոնկրետ ուսումնական առաջընթացի տեսակետից գրեթե միշտ դրական են:

Սովորողներին նաև պետք է սովորեցնել, որ , հնարավորության դեպքում տանը ունկնդիր դարնան անգլերենով հնչող ձայնագրությունիրին: Լսելու հմտության զարգացման տեսակետից իրենց դևրական ազդեցությունն են թողնում նաև օտար լեզվով արտադասարանային հաղորդակցությաւնները՝ շփումը օտար ազգի ընկերնոռի հետ: Այստեղ շատ է կարևորվու նաև դասագրքի ընտրության հարցը: Գերադասելի է այն դասագիրքը, որտեղ լսելու նյութը դրա օրգանական բաղադրամասն է կազմում՝ դասի կառուցվածքին զուգակցված բազմաթիվ

առաջադրանքներով: Նման դասագրքերը սովորաբար ունենում են նաև իրենց բարձորակ ձայնագրությունները:

Ունկնդրելու նյուրի աեատ աղբյուր են նաև համացանցն ու հերուստատեսությունը: Եթե դասարանները, որտեղ իրականացվում է անգլերենի ուսուցումը բարոխտաբար հագեցված են տեխնիկական միջոցներով,ինտերնետ, համակարգիչներ, հերուստացույց, ապա դրանք, իբրև հնչող խոսքի աղբյուր , դասարանում օգտագործելն իր լավագույն արդյունքն է տալիս: Հակառակ դեպքում այդ միջոցների հետ կապված առաջադրանքներն անհրաժեշտ է տեղափոխել տնային հանձնարությունների բաժին: Իբրև առաջին խնդիր մնում է ընթացիկ դասավանդման ժամանակ լսել-հասկանալու հմտության զարգացմանն ուղղված աշխատանքներն,ավելի կարևորել դրանց, ավելի շատ ժամանակ տրամադրել դասարանում, ընէացիկ ստուգումներ և թեստեր կազմակերպել, որովհետև առանց լավ զարգացած լսել-ըմբռնելուհմտությունների հնավոր չէ իրականություն դարձնել անգլերեն սովորելու ամենակարևոր նպատակը՝անգլերենով հաջողքությամբ և արդյունավետ հաղորդակցվելը:

Գլուխ 2 Մենախոսություն

Խոսքային գործունեության զարգացման համար հիանալի միջոց է հանդիսանում ձայնագրությունների ունկնդրումը: Ինչքանել կատարյալ լինի ուսուցրի խոսքը այնուամենայնիվ նա կարիգ ունի տեխնիկական միջոցների օգնությանը: Դրանց համակարգված լսելը նպաստում է խոսքային գործունեության բոլոր տեսակների զարգացմանը՝ մենախոսությանն ու երկխոսությանը: Սովորողների բանավոր խոսք պետք է զարգացնել հիմնականում դասարանում, քանի որ նա ուրիշ ոչ մի տեղ օտար լեզվով չի խոսում, և միջավայրում, և տանը այդ օգնությունը չի ստանում:

Անգլերեն լեզվի դասերին կատարվում է բանավոր խոսքի զարգացման հետևյալ վարժության տեսակներն՝ մենախոսություն և երկխոսություն:

Մենախոսության ոլորտում պահանջվում է, որ սոորողը կարողանա բանավոր արտահայտի իր մտքերը, խոսել մեր երկրի, իր աշխատանքային օրվա, դպրոցական առօրյայի, երաժշտության, սպորտի, մշակույթի, և նման այլ թեմաների շուրջ:

Մենախոսությունը սովորաբար լինում է նախապատրաստված, որովհետև պլանավորվում է: մենախոսության ընթացքում խոսողը ինքն է որոշում արտահայտության բնույթը և ծավալը: Ի տարբերություն երկխոսության հակիրճնախադասություններիր, մենախսությունը բնորոշվում է ծավալուն նախադասություններով: Մտքերը շարադրելիս սովորողը պետք է նախապես իմանա ինրի մասին է խոսելու: Դասի ընթացքում անցկացվում է ուսուցանող խաղեր, որոնք նպաստում են լեզվական հմտությունների և կարողությունների զարգացմանը: Ուսումնական խաղերը նպաստում են սովորողների դաստիրակմանը, կարգապահությանը և բնավորության ձևավորմանը:

Փոքրիկ ոտանավորների երգերի անգիր սովորելը նպաստում է նրանց խոսքի արտասանության զարգացմանը, բառապաշարի ակտիվանացմանը և օժանդակում հնչերանգի յուրացմանը:

Գլուխ 3 Երկխոսություն

Երկխոսություն, դիալոգ, խոսակցություն երկու անձանց միջև: Երկխոսության միջոցով աշակետին սովորեցնում ենք այս կամ այն իրադրության շուրջ զրույց վարել՝ օգտագործելով տարբեր պատասխաններ: Հարցադրման միջոցով՝ հարցեր տալու կարողությունը զարգացնելը նույնպես օտար լեզվի զարգացման կարևոր վարժություններից է: Երկխոսության մեջ մեծ տեղ է հատկացվում հարց ու պատասխանն: Ժամանակի ընթացքում այն վերածվում է Կապակցված խոսքը:

Զրույցի նպատակը պետք էլինի բանավոր խոսքի կայուն հմտություններ ստեղծելով հանդերց զուգընթացաբար նպաստել թեքարի բառապաշարի և քերական նյութի մշակմանը: Զրույցի համար սովորողների հետ կարելի է ստեղծել որևե ուսումնակ իրավիճակ: Նյութին ծանոթանալուց հետո ուսուցիչը բաժանում է դերերը: Երկխոսությունը վարելու նպատակով ուսուցիչը կարող է ընտրել դասագրքի նյութը կամ համապատասխան աշխատանք տանել տվրալ նյութը համապատասխան նկարներով; Երկխոսության միջոցով աշակերտին սովորեցնում ենք ցանկացած իրադրության շուրջ զրույց վարել՝ օգտագործելով տարբեր պատասխաններ:

Օրինակ 5-րդ դասարանի դասագրքում (“Shopping”) “Գնումներ “ թեմայի վերաբերյալ կազմվում է երկխոսություն՝ հաճախորդ-գնորդ իրադրությունով:

Shop Assistant -A

Customer- B

A	Hello! Can I help you?
B	Yes please, I’m looking for a pair of gloves

A	What about this nice pair of gloves them
B	That's Ok. I'll take it. How much are they?
A	It's a 20 dollars.
B	Here you are.
A	Thank you,for shopping.
B	Thank you!
A	Good bye!
B	Good bye!

Այս երկխոսության մեջ սովորողն մատուցվում է գնումների ժամանակ ինչպիսին պետք է լինի հաճախորդը և վաճառողը: դևանով սովորողների մեջ ձևավորում ենք հաճախորդ և վաճարող հարաբերություն ու մշակույթ:

Երկխոսության ուսուցման պրակտիկայում ինչպես կա առավելություն, դիտում ենք մի շարք թերություններ:

Օրինակ՝ ծավալուն երկխոսությունն ընթերցելն ու անգլերեն սովորելը արդյունավետ են, քանի որ սովորողների համար դժվար է առանձնացնել այն բառակապակցությունները, որոնք նրանց համար պետք են գալու նոր իրադրություններում: Երկխոսության կարողությունները հիմնականում զարգացնում ենք հարց ու պատասխանի ձևով, սակայն դա չի նշանակում,թե մասնակիցներից մեկը պետք է միայն հարցեր տա, իսկ մյուսը պատասխանի:

Եզրակացություն

Ամփափելով՝ պետք է ընդգծել, որ սովորողն անպայման պետք է հստակ պատկերացնի բանավոր խոսքի ընկալման իր խնդիրներն ու նպատակները։ Անգլերեն բանավոր հաղորդակցության ուսուցումը բարդ համակարգ է,որը ընդգրկում է մի շարք միավոր գործընթացներ՝նոր տեզեկատվություն ընկալելը, մտապահելը, ճաբաչելը, ինչպես նաև մշակելն ու փոխանցելը։

Անգլերեն բանավոր խոսքի ուսուցման գործընթացի արդյունավետությունը ապահովվելու համար շատ կարևոր է առանձնացնել լեզվական հմտությունների այն բաղադրիչները, որոնք սահմանագծվում են անգլերենի բանավոր խոսքում։ Բանավոր խոսքի հաջողության համար կատարվում է ինչպես լեզվական այնպես էլ արտալեզվական գիտելիքները։ Այսինքն՝ արդյունավետ զրույց ունենալու համար անհրաժեշտ է ունենալ խոսակցության թեմայի վերաբերյալ հիմնային գիտելիքներ։

Սրանք կարևոր պայման են սովորողների բանավոր հաղորդակցական կարողությունների զարգացնելու գործում։ Պետք է ժամանակ առ ժամանակ վերացնել ու մշակել ուսուցման մեթոդները, մոտեցումները, իրենց բոլոր հանգամանքներով։ Իսկ դրանց ճիշտ ընտրության դեպքում հաղորդակցական ուսուցման պայմաններում նպատակավորված ուսուցման արդյունավետրության բարձրացմանը սովորողի լեզվահաղորդակցական հմտությունների ձևավոևմանն ու զարգացմանը։ Քանի որ բանավոր խոսքը օտար լեզուների ուսուցման կենտրոնական օղակներից մեկն է պետք է ձգտել հասնել այն բանին, որ յուրաքանչյուր սովորող, իր յուրացրածը բառապաշարի սահմաններում կարողանա խոսել առօրյա հարցերի շուրջ, հասկանա ուրիշների ասածը։

Ցանկացած դասընթաց, մեթոդ ուսանեկի, արդյունավեր և իրատեսական կլինի, եթե բոլոր դպրոցները հագեցած լինեն նոր տեխնոլոգիաներով և դրանք հասանելի լինեն թե ուսուցիչներին, թե սովորողներին։

Գրականություն

1. Ասատրյան Ս.Պ., հարությունյան Ա. Մ. Լեզվական և արտալեզվական գործոնների հաշվառումը ժամանակակից անգլերենի բանավոր հաղորդակցության ուսուցման գործընթացում// Դասավանդման մեթոդիկա. 2014.1:
2. Բաբայան Ա. Մ. , Իսրայելյան Ա. Հ. Օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների ուսուցման մեթոդական ուղեցույց: Երևան, ԵՊՀ հրատ., 2014:

http://videouroki.net>razrabotk:

3. Բանավոր խոսքի ուսուցումը որպես հաղորդակցման միջոց

http://videouroki.net>razrabotk:

4. Գիտահետազոտական հանդես Օտար լեզուները Հայաստանում 2017:1
5. http://publications.ysu.am/wp-content/uploads/2016/02/Arus_Margaryan.pdf